

3. Վերոնիխա եւ Վեսպասիանոս կայսր. — Բարիզի կայսերական թանգարանին մէջ գտնուած ձեռագիր քերթուած մը կը պատմէ Վեսպասիանոսի բժըշկուիւնը Վերոնիքայի կողմէն, Երուսաղէմի պաշարումը և Պիղատոսի մահը:

«Վեսպասիանոս՝ Հռովմի կայսրը բորոտութեամբ կը վարակուի, և բժիշկները չեն կրնար բուժել, բայց ան կ'իմանայ թէ Երուսաղէմ քաղաքին մէջ կը գրտնուի Վերոն անուէն առաքինի կին մը, որ կը պահէ կտակի վրայ պատկերը մեծ մարգարէի մը զոր հրեաները անիրաւութեամբ խաչեցին: Բոլոր հիւանդութիւնները այդ պատկերով կը բժշկուէին: Խորհուրդ կուտան հիւանդին հաւատարիմ ծառայ մը ղրկել Երուսաղէմ փնտոելու Վերոնը որ նոյն պատկերը առնելով Հռովմ գայ: Երուսաղէմ հասնելով ան՝ հիւր եղաւ հրեայի մը, որ էր հայրը երեք Մարիամներէն մէկուն. սա ալ կը ներկայացնէ զանիկա այն կնոջ՝ որ ունէր հրաշալի պատկերը: Վերոն կը պատմէ թէ ինչպէս Տիրոջը մայրը իրեն յանձնած է իր Որդւոյն պատկերը. ան կը հաւանի առաջարկուած ճամբորդութեան: Հըռովմ կուգան ուր աստուածային պատկերը վերջապէս

Մեր մատենագրութեան մէջ Բերինիկէն կոչուած է նաեւ **Փոսիմ** (**Տար. 2.** էջ 495):

Վերոնիխան, ըստ Ա. Տեղեաց Ուղեցոյցին, Բերինիկէ կոչուած է, հաւանաբար **ճշմարիտ պատկեր** իմաստով: Տանթ ալ (1265-1321) իր **Արեալաքիւն** գրքին մէջ կը գրէ նոյն իմաստով. անա իր խօսքերը.

«Ձոր օրինակ ան որ թերեւըս կուզայ
Խռուադիայէն տեսնելու մեր դասառակն,
Եւ համբաւին համար հին՝ չի յագենար»:

(Թարգ. 2. Ա. Ղազիկեանի, Երգ. ԼԱ. էջ 189)